ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ **2025 թ. մարտի 20-ի** թիվ 6 հարցման կարգով արտահերթ նիստի

ՀՀ, ք. Երևան 20.03.2025 թ.

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ հարցման կարգով նիստի օրակարգում քվեարկության դրվեց երկու հարց՝

1. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամում ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի 2026 թ. հայտերի հաստատում»,
2. «Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդի ընտրության վերաբերյալ ընդունած որոշման հաստատում»:

Հարցման կարգով նիստին մասնակցեց ԵՊՀ գիտական խորհրդի 80 անդամներից 59-ը:

1. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամում ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի 2026 թ. հայտերի հաստատում»:

Հիմք ընդունելով ԵՊՀ գիտական ու գիտատեխնիկական գործունեություն ծավալող ենթակառուցվածքային ստորաբաժանումների ներկայացրած հայտերը՝ **որոշվեց.**

հաստատել ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամում ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի 2026 թ. հայտերը (59 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2. «Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդի ընտրության վերաբերյալ ընդունած որոշման հաստատում»:

Հիմք ընդունելով ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի առաջարկությունն ու 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդի տվյալները՝

որոշվեց.

հաստատել Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդի ընտրության վերաբերյալ ընդունած որոշումը՝ 4-րդ կուրսի ուսանող Երջանիկ Հարությունյանին Գաբրիել Մոլոյանի անվան արտաքին ֆինանսավորմամբ (50000 ՀՀ դրամ) անվանական կրթաթոշակ հատկացնելու մասին (59 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

Գիտական խորհրդի նախագահ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան